

Էմիսեան ազգագրական ժողովածու, հասոր Ը. Հայ բարբառագիտութիւն.—ուրուագիծ եւ դասաւորութիւն հայ բարբառների (բարբառագիտական բարեսով) գրեց Հր. Անառեան, Մոսկուա—Նոր Նախիջեւան, 1911, էջ XII—305, գիծը 1 ու. 25 կ.

Հր. Անառեանը անձանօթ անձնաւորութիւնը չէ. նա հազուադիւր հայ գիտնականներից մէկն է, որ ուսուցչի համեստ անուան տակ նուիրել է գիտութեան մի շարք գրեւածքներ, որոնք պատւաւոր տեղ են բռնում մեր լեզուի ուսումնասիրութեան պատմութեան մէջ:

Այժմ նա հրապարակ է հանել իւր «Հայ բարբառագիտութիւնը», որ անտարակոյս Անառեանի գլուխ գործոցը պէտք է համարուի:

Այս գիրքը հեղինակի 1909 թ. Փարիզում հրատարակած Classification des dialectes arméniens գրքի բնագիրն է, աւելի մշակուած և ճոխացրած բարբառների նմոյշներով: Հրատարակուած է Լազարեան ճեմարանի ծախքով և այժմ արդէն հանգուցեալ Գր. Խալաթեանցի յառաջարանով և կազմում է Էմիսեան ազգագրական ժողովածուի Ը. հատորը: Յառաջարանում ղեկեղուած է նաեւ երկու հայագէտ պոռֆեսսորների—Մէյէի և Քառաստի կարծիքը գրքի մասին:

Գիրքն ունի բացի յառաջարանից ամփոփ ներածութիւն (1—24 էր.) և 3 առանձին գլուխ—«Հայոց բնակած տեղերը», «Օտարախօս հայերը» և «Հայերէն բարբառներու երեք ճիւղերը» (էջ 25—35). իսկ մնացած ամբողջ մասը (36—292 էր.) նուիրուած է հայ բարբառների դասաւորութեան և պարունակում է նրանց մասին հակիրճ տեղեկութիւններ: Անառեանին յայտնի բարբառների թիւն է 31 (ուսմ ճիւղի 7, կր ճիւղի 21 և ել ճիւղի—3). իւրաքանչիւր բարբառի մասին մենք գտնում ենք 1) Ընդհանուր տեղեկութիւններ—տարածութեան, ենթաբարբառների մասին ևն. 2) Հնչիւնաբանական և ձևաբանական գիտելիքներ ոչ միայն բարբառի, այլ և յայտնի գէպքում—ենթաբարբառների մասին. 3) Մատենագիտութիւն, 4) Նմոյշներ: Գրքին կցուած է բարբառաբանական քարտէզ:

Պ. Անառեանի գիրքն ունի մի շարք առաւելութիւններ, որոնք և մատնանշուած են յիշեալ հայագէտների կողմից: Թւենք համառոտակի այդ արժանիքները:

1. «Հայ բարբառագիտութիւնը» հայ բարբառաբանութեան

ուրուագիծն է և տալիս է մեր բարրառների մինչև այժմ պարզուսած պատկերը: Ինչպէս իրաւամբ նկատում է Մէյէն, Աճառեանը միակ մարդն էր, որ կարող էր ներկայացնել մեզ այդ պատկերը շնորհիւ իւր ունեցած անձնական գիտողութեանց և հաւաքած նիւթերի:

2. Հայ բարրառներն այս գրքում ստացել են նոր դասակարգութիւն (կլասսիֆիկացիա) շնորհիւ այն ձեւաբանական սկզբունքի, որ հիմք է ընդունել իւր այս գործում պ. Աճառեան:

3. Գրքի մէջ բերուած է կարեւոր մատենագիտութիւնը և կցուած է բարրառաբանական քանտէզ, որ նորութիւն է հայ բարրառաբանութեան համար:

4. «Հայ բարրառագիտութիւնը» կարող է այսուհետեւ ծառայել որպէս հայ բարրառաբանութեան ծրագիր շնորհիւ այն բանի, որ այդտեղից միանգամայն պարզ է, թէ որ բարրառներն են ուսումնասիրուած և որոնք են կարօտ հետազօտութիւնների:—Աւելացնենք նոյնպէս, որ

5. Հայերէն հրատարակութիւնը պարունակում է նաև նմոյշներ—մի շատ գեղեցիկ և կարեւոր յաւելում:

6. Ուշադրութեան արժանի է ներածութիւնը, յատկապէս «Նոր հայերէնի տարբերութիւնը հին հայերէնէն» մասը և «Հայոց քնական տեղերը» գլուխը:

Սակայն առաւելութիւնների հետ գիրքն ունի և թերութիւններ. մենք այս յօդուածում մի կողմ թողնելով մասնաւոր բարրառներին վերաբերեալ տեղեկութիւնները,* իր շօշափենք մի քանի սկզբունքային հարցեր, որոնց այս կամ այն կերպ ըմբռնումից կախուած է լինում ամբողջ հետազօտութեան ուղղութիւնը կամ քննադրութիւնը:

1. Մենք գտնում ենք պ. Աճառեանի, ինչպէս նաև մեր բարրառագէտների մեծագոյն մասի մօտ մի խոշոր մեթոդոլոգիական սխալ. այդ այն է, որ նրանք երևի պարզ գաղափար չունենալով պատմական քերականութեան մասին և բարրառների կատարելիք դերի մասին այդ քերականութեան կազմութեան գործում, ընկնում են մի շարք շփոթութեանց մէջ: Դրանով է բացատրւում այն տարօրինակ երևոյթը, որ պ. Աճառեանի գրքում, ինչպէս նաև այլ բարրառագէտների մօտ (Գաղանձեան, Դաւիթ-բէկ և այլն) յաւիտեան շփոթւում են «հին հայերէն», «նախահայերէն» և «գրաբար» գաղափարները:

«Արարատի» սոյն թւի № 4-ում ղետեղած մեր «Ինչ կերպ հնարաւոր է հայերէնի գիտական ուսումնասիրութիւնը» յօդուածից

* Այս տեղեկութիւններից շատերը կցկտուր են և լի սխալներով, և ընդհանրապէս գիրքը թողնում է շտապ կազմած գործի ապաւորութիւն:

պարզ է, թէ՛ որն է «հայերէնը» կամ «Հայոց լեզուն»։ հասկանալի է նոյնպէս, որ «հին հայերէն» պայմանական անունը կարելի է յատկացնել հայերէնի զարգացման մի որոշ—հին շրջանին, իսկ «նոր հայերէնը»—նոր շրջանին։ Բացի զրանից կարելի է որոշել նաև լեզուի պատմութեան միջին և հնագոյն շրջան. զրանց էլ կը համապատասխանեն «միջին հայերէն» և «նախահայերէն» տերմինները։

Սակայն այդ տերմինները չէ կարելի վերագրել լեզուի այս կամ այն շրջանի որևէ բարբառին (զրական, թէ՛ ոչ զրական—այդ միևնոյն է)։ նրանք վերաբերում են լեզուի նոյն շրջանի ամբողջութեանը։ Հասկանալի է այդ տեսակէտից թէ՛ որքան կոպիտ սխալ է «հին հայերէնը» կամ «նախահայերէնը» նոյնացնել զրաբարի հետ։ Այդ անում է պ. Աճառեան ամեն քայլափոխումը։

Գրաբարը հին հայերէնի մի բարբառն է. ինչպէս չենք կարող մենք արդի հայ բարբառներից որևէ մէկի (օր. Ղարաբաղի) երևոյթներն անխտիր վերագրել նոր հայերէնին, այնպէս և իրաւունք չունենք զրաբարի երևոյթները վերագրելու հին հայերէնին։ Պ. Աճառեան այդպիսի շփոթութիւն թոյլ է տալիս միշտ։ Նա խօսում է հին հայերէնի մասին և բերում օրինակներ զրաբարից։ Համեմ. «նոր հայերէնի տարբերութիւնը հին հայերէնէն» ամբողջ գլուխը (էջ 15—24)՝։ Սակայն շփոթութիւնը հասցնում է հեղինակին ուղղակի անսպասելի հետեանքների. նա առանց այլևայլութեան հաստատում է, որ նոր լեզուի երևոյթներն առաջացել են զրաբարից. համեմ. էջ 16. «նոր հայերէնը առհասարակ երկրաբառներ չընդունիր, այնպէս որ զրաբարի երկրաբառային հարուստ գրութիւնը ամբողջապէս կազմալուծուելով։ առաջ եկած են անոնցմէ պարզ ձայնաւորներ կամ ձայնաւոր+բաղաձայն խումբեր»։ Դիչ յետոյ՝ «զրաբարի աւ երկրաբառը վերլուծուելով օ, ներկայ լեզուին մէջ յառաջ եկած է երկու տեսակ օ (1, օ < զրբ. օ և 2, օ < զրբ. աւ), և այլն»։

Այս բաւական չէ, պ. Աճառեան աւելորդ է համարում «հին հայերէն» տերմինը գործածել և փոխարինում է նրան լոկ «հայերէն» տերմինով, որի տակ նա հասկանում է զարձեալ զրաբարը։ Այդ նկատելի է զրբի ամեն մի երկսում (սկսած 38 էջից), այնպէս որ օրինակ բերելն աւելորդ ենք համարում։

2. պ. Աճառեանի զրբի գլխաւոր նորութիւնը—բարբառների կլասսիֆիկացիան—մենք համարում ենք թոյլ հիմնաւորուած և

*) Թերևս պ. Աճառեան հին հայերէն անուն տակ ընդունում է զրաբարը։ Թոյց մի թէ նա նոր հայերէնը—արդի բարբառների ամբողջութիւնը—առաջացնում է զրաբարից։

սխալ. այդ խնդրին մենք կը դառնանք առանձին յօդուածով:

3. պ. Աճառեան առաջարկում է հրահանգ բարձրաոնների ուսումնասիրութեան համար բառարանի օգնութեամբ (էջ 11—12): Մի փորձուած բարձրաոգէտից խորհուրդներ ստանալն անշուշտ ցանկալի պէտք է լինի անվարժների համար: Սակայն մենք համոզուած ենք, որ պ. Աճառեանի առաջարկած ձևը, որ թերևս յարմար է հեղինակի համար, կը կաշկանդի և կը մոլորեցնի ուրիշներին: Նախ նկատենք, որ բառարանի օգնութեամբ աշխատողը միշտ կախում կունենայ ներկայ գրական լեզուին յատուկ արտասանութիւնից. այնուհետև մեզ համար խիստ կասկածելի է, որ բառարանի և զբարարի քերականութեան օգնութեամբ կազմած բարձրաոնների ուսումնասիրութիւնները կարողանան դառնալ «կատարեալ գործ մը»: Գոնէ Սարգսեանի ուսումնասիրութիւնից յետոյ (որ անշուշտ այդ մեթոդով չէր աշխատում), մի այդպիսի կատարեալ գործ չը տեսնեմք...: Մենք հակառակ կարծիքի ենք. նախ պէտք է հաւաքել ճիշտ գրի առած բաղմակողմանի նիւթ (որ կը պարունակէ բացի բառարանի միջի «ընիկ բառերից» բաղմաթիւ այլ «ընիկ բառեր», որոնք անյայտ են բառարանին) և նրա հիման վրայ կազմել թէ ֆոնետիկան և թէ մորֆոլոգիան ու սինտաքսիսը, ճիշտ այնպէս, ինչպէս մի բոլորովին օտար լեզուի ուսումնասիրութեան ժամանակ: Այդ ձևով միայն կարելի է բարբառի հարազատ երեոյթներն և ձևերը նկատել, առանց կախումն ունենալու զբարարից ու բառարանից: Բառարանի օգնութեան պէտք է դիմել միայն ստուգելու նպատակով, և այն—մեծ զգուշութեամբ:

Պ. Աճառեանի առաջարկած մեթոդի (որի հեղինակն է Տոմսոն) հետեանքներից են ի միջի այլոց ա. կէտում ցոյց տուած անակնկալները: Այդ մեթոդով կազմած լաւագոյն ուսումնասիրութիւնն անկասկած Մսերեանինն է (Մշի բարբառի ուսումնասիրութիւնը) և յատկապէս բ. մասը—Сравнительная морфология мушского діалекта въ связи съ морфологією грабара и среднеармянскаго, որ Մառ սրամտութեամբ անուանում է Слѣды индоевропейской морфологии въ грабарѣ въ связи съ среднеармянскимъ и діалектами, отчасти мушскимъ діалектомъ*): Այս տիպի այլ ուսումնասիրութիւնների համար մենք կը ստանանք մի ընդհանուր վերնագիր—«Գրարարի հետքերը այսինչ բարբառում»:

4. պ. Աճառեանի գործածած գիտական ուղղագրութեան մասին պէտք է նկատել հետևեալը.—պ. Աճառեանը համաձայն է, որ

*) «Тексты и разысканія», V, 1903.

նպատակայարմար է փոխ առնել եւրոպայում մշակուած լինգուիստական տրանսկրիպցիան. բայց գտնում է, որ կան մի քանի արգելառիթ հանգամանքներ. ա) Մեր ազգային նախանձախնդրութիւնը (?), բ) տպարանների աղքատութիւնը և գ) գլխաւորապէս աչքի անվարժութիւնը—ա) կէտում յայտնածը տարօրինակ է հնչւում մի գիտնականի բերնում. բ) կէտը հիմք չէ. տպարանատէրերը ուրախ կը լինեն ձեռք բերել կարևոր նշանները, բարձրացնելով տպագրութեան ծախքը, իսկ գ) կէտը համոզեցուցիչ չէ. գիտական, մասնաւորապէս լեզուաբանական, գրքեր կարգացողը պէտք է ունենայ որոշ պատրաստութիւն. իսկ այդպիսի մարդու համար յամենայն դէպս աւելի դժուար չէ կարդալ արդէն ծանօթ գիտական նշաններով, քան ազատուել տրագիցիայի ազդեցութիւնից և ռընդունել ո՞ր երկրարբաւի, ե—ie երկրարբաւի տեղ և այլն, ինչպէս առաջարկում է պ. Աճառեան:

Բայց տեսնենք պ. Աճառեանի ուղղագրութեան դեֆեկտները. ռ) օ, ու, u հնչիւնների համար պ. Աճառեան ոչ մի կերպ չէ կարողացել յարմար նշաններ ստեղծել հայերէն տառերի օգնութեամբ (նա գործ է ածում եօ, իւ, ու), այդ գիտակցում է ինքը. Ե) Սակայն նա չէ նկատում, որ զյ, ֆյ, կյ և իյ նշանները, որ նա գործ է ածում որոշ հնչիւնների համար, հակասում են իւր իսկ արդարացի պահանջին. «Ամէն ձայն պէտք է նշանակուի միայն մէկ գրով» (էջ 6). Շ) Չկայ վրացերէնի զ հնչիւնի համար առանձին նշան, մինչդեռ այդ հնչիւնը բաւական տարածուած է մեր զանազան բարբառներում:

Ժ) Հայերէն տառերի օգնութեամբ մենք երբէք չենք կարող լեզուաբանական ճշտութեան մօտենալ: Ի՞նչպէս արտայայտել լեզուական բազմաթիւ երևոյթներ, որոնք յիշում է պ. Աճառեան (էջ 6) և որոնց վրայ կարելի է աւելացնել և ուրիշները—օր. լարուած հնչիւններ, պալատալիզացիա, վիլարիզացիա, լարիալիզացիա և այլն—հարցեր, որոնք դժբաղդաբար համարեա թէ չեն շօշափուած մեր բարբառաբանութեան մէջ:

5. Նկատենք պ. Աճառեանի մի յատկութիւնը.—նա շատ անգոյշ է տերմիններ կամ բառեր գործածելու մէջ. այդ յատկութեամբ ենք ուզում բացատրել մենք մի քանի թիւրիմացութիւններ, որոնք տեղ չը պէտք է բռնեն գիտական գործերում: Պ. Աճառեան ձայն բառը գործ է ածում ոչ միայն հնչիւնի, այլ և հնչիւնային կապակցութեան (կոմպլեքսի) մտքով. համեմ. օր. էջ 54 «բնդ ձայնը թիֆլիզի բարբառին մէջ սկզբնական ց մըն ալ կ'ստանայ» և այլն. նոյն իսկ շփոթում է տառերը և հնչիւնները (էջ 5... «պիտի քննուի թէ հայերէն տառերը կամ ձայները ինչ ու ինչ ձայնափոխութիւններ կրած են նոյն բարբառին մէջ»)։—Գ, կ, ֆ հնչիւն-

ները պ. Աճառեան հին քերականների նման «կոկորդական» է անուանում (էջ 65), անշուշտ շատ լաւ իմանալով, որ դրանք կոկորդային հնչիւններ չեն:—Երևանի բարբառը պ. Աճառեան անուանում է «ամէնէն մաքուր»: անշուշտ այդպիսի ոչ գիտական դարձուածքներից ազատ կարելի էր լինել:—

Բաւականանաք այսքանով: Յիշած պակասութիւնները չեն խանգարիլ պ. Աճառեանի գրքին կատարելու պատուաւոր դեր մեր բարբառների ուսումնասիրութեան գործում: Բայց բացի այդ մասնագիտական նշանակութիւնից, այստեղ կը գտնեն իրենց համար հետաքրքիր և օգտակար գիտելիքներ նաև հայերէնի ուսուցիչները և առհասարակ այն ամենքը, որոնք այսպէս թէ այնպէս հետաքրքրուում են հայագիտութեամբ: Այդ բոլոր նկատումներով յանձնարարում ենք պ. Աճառեանի անպայման օգտակար գիրքը բոլոր մայրենի լեզուովը հետաքրքրուողների ուշադրութեան:

Ռ. Աբրահամեան

ՔՆՆՈՒՐԻՆ ՄԱՐԽԱՍԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆԵ ԱՂԱՔԱՆԳԵՂՈՒԻ
ԵՒ ՂԱԳԱՐԱՅ ՓԱՐԱԵԵՂՈՅ Ի ՆՈՐԱՅՐԷ ԲԻԼԳԱՆԳԱԵՂՈՅ.
Վ.ԻԵՆՆԱ 1911 (եր. 161—174):

Սա արտատպութիւն է «Յուշարձան» գրական ժողովածուից, որ հրատարակուած է Վիեննայի Մխիթարեան միաբանութեան 100-ամեայ յոբելեանի առթիւ: Ամենից առաջ տարօրինակ է թւում այն, որ չնայելով Ազաթանգեղոսի ճակատին տպուած է «հրատարակութիւն Ս. Էջմիածնի» և ապա «ծախիւք Սուքիասայ արքեպիսկոպոսի Պարգեանց», բայց և այնպէս քննութիւն գրողն այս հրատարակութիւնը վերագրում է Ստ. Մարխասեանին: Դժուար է կարծել, թէ պատահական անուշադրութիւն լինի այս հանգամանքը, որ պատիւ չի բերում քննութիւն գրողին: Ապա, Էջմիածնի այս հրատարակութիւնները յաւակնութիւն չեն ունեցել «քննական» կոչուելու. այլ նրանց վերնագիրն է «Պատմագիրք Հայոց, ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց»: Ամեն հասկացող, դրանց մէջ և Նորայր Բիւզանդացին, պիտի իմանայ, որ դա մի նախապատրաստութիւն է ապագայ քննական հրատարակութեան և ամենակարեւոր նախապատրաստութիւն, քանի որ ամեն